ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/43» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

28.09.2018թ.
ժամը 11[00]

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետի տեղակալ, ՔՀՇ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան (ԳԱՊ),
ՀՀ ՋՈՒ ԹՎ իրային ծառայության պետ, գնդապետ Վ. Պապյան,
ՀՀ ՋՈՒ ԹՎ իրային ծառայության պահեստների, տեխնիկական միջոցների և բաղնիք-լվացքատնային սպասարկման բաժանմունքի ավագ ինժեներ, կապիտան Վ. Բարսեղյան,
Բացակայում է՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀՇ 1-ին դասի խորհրդական Գ. Ուխտյան,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀՇ 2-րդ դասի առաջատար ծառայող Գ.Գևորգյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/43» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ. Գևորգյան)

1. Մասնակիցների՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի առկայության, դրանց ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Գ. Գևորգյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/43» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին «ԳԴԱԿ» ՍՊԸ-ի համապատասխանությունը հավաստող փաստաթղթերն առկա են, սակայն դրանց և ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3 կետով նախատեսված փաստաթղթերի միջև առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ մասնակցի կողմից Հավելված 6.1-ով ներկայացրած 1-ին չափաբաժնի ապրանքի տեխնիկական բնութագրում նշված է «2381 արտիկուլի կամ համարժեք», «2481/2581 ԻԱ արտիկուլի կամ համարժեք» և «8-C5-BШ արտիկուլի կամ համարժեք», 4-րդ չափաբաժնի ապրանքի տեխնիկական բնութագրում՝ «վիսկոզային կամ համարժեք», ապրանքների տեխնիկական բնութագրերում բացակայում է տեխնիկական բնութագրի անբաժանելի մաս կազմող հավելված 6-ը: Քանի որ առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքների հատկանիշները, բացառելով տարակերպ մեկնաբանությունը, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և 28.09.2018թ. մասնակցին ծանուցել անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ: Մասնակիցը սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունները, և 02.10.2018թ. նիստը շարունակվել է: Սակայն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/43» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որակավորման փաստաթղթերի գնահատման նիստում 28.09.2018թ. չի արձանագրվել հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3 կետով նախատեսված և մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա անհամապատասխանությունը, մասնավորապես՝ համաձայն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/43» ծածկագրով ընթացակարգի հրավերի 7.19 կետի 3-րդ պարբերության՝ մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը (Հավելված 6, Հավելված 6.1 և տեխնիկական բնութագրի անբաժանելի մաս կազմող հավելված 6) պետք է հաստատվեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և 02.10.2018թ. մասնակցին ծանուցել անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ: Մասնակիցը սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունները, և 03.10.2018թ. նիստը շարունակվել է:

Քանի որ 26.09.2018թ. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն «ԳԴԱԿ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 2000 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություններ, որոնք չեն գերազանցում Օրենքով նախատեսված շեմը և մասնակցի կողմից ներկայացրած գնային առաջարկի մեկ տոկոսը, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարել իրականությանը համապատասխանող:

1.2 03.10.2018թ. հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց մասնակցի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/43» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված/հաղթող/ մասնակից:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/43» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ. Գևորգյան)

Հանձնաժողովը որոշեց հայտարարել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/43» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքները և հաստատել կնքվելիք պայմանագրի մասին հայտարարության տեքստը: Հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող Հ. Մելիքյան

Գնահատող Վ. Պապյան

Գնահատող Վ. Բարսեղյան

Գնումները համակարգող Գ. Գևորգյան